

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 09.01.2017թ. - 29.12.2017թ.

Հաշվետյու ժամանակաշրջանում բաժնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Իրականացվել է վարչական հսկողություն մարզի 35 համայնքներում և հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները սահմանված ժամկետներում վերացնելու նպատակով արվել է համապատասխան առաջարկություններ:

2. Աջակցություն է ցուցաբերվել տարածքային զինվորական կոմիսարիատներին, հատկապես պարտադիր զինվորական ծառայության զորակոչի իրականացման գործում, առաջին զորակոչերը կազմակերպվել և հանրապետական հավաքակալան են ուղարկվել մեծ տոնախմբությամբ, որի ժամանակ Լոռու մարզպետի կողմից զորակոչիկներին տրամադրվել է առաջին օգտագործման պարագաներ:

4. 2017թ. զորակոչի պետական առաջադրանքը կատարվել է 97.5 %-ով (2016թ. ձմեռային զորակոչը 94 %, 2017թ. ամառային՝ 101 %):

5. Պարբերաբար հսկողական և բացատրական աշխատանքներ են տարվել Լոռու մարզի տարածքում այլընտրանքային (8 մարդ) աշխատանքային ծառայության անցած աշխատողների հետ:

6. Իրականացվել է Լոռու մարզպետարանի աշխատակազմի, Լոռու մարզի համայնքների, դպրոցների և զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների զինապարտ քաղաքացիների ամրագրման գործընթացը:

8. Բարոյական, ֆինանսական և նյութական աջակցություն է ցուցաբերվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և ադրբեջանական զորքերի շփման գծում 2016 թվականի ապրիլի 2-5-ը տեղի ունեցած քառօրյա պատերազմի ժամանակ զոհված ու վիրավոր զինվորների ընտանիքներին: Համայնքների ղեկավարների և տարածաշրջանային զինվորական կոմիսարների հետ համատեղ մշտական ուշադրության կենտրոնում է պահվել զոհված և վիրավոր զինծառայողների ընտանիքներին: Այս գործընթացը ունի շարունակական բնույթ:

- Հունվարի 28-ին Հայոց բանակի կազմավորման 25 – ամյակի կապակցությամբ այցելել ենք զոհված և վիրավոր զինծառայողների ընտանիքներին և աջակցել ենք դրամական օգնությամբ:

- Զոհված զինծառայողների մայրերի 7- օրյա հանգիստը Քոբուլեթի կազմակերպելու համար ապահովել ենք հանգստացողների տեղափոխումը Գյումրի և հետ վերադարձը:

- Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշման պահանջների պաշտպանության նախարարության և սոցիալական ապահովության բաժնի հետ համատեղ քննարկվել, վերանայվել է թարմացվել է զոհված (մահացած) զինծառայողների անօթևան ընտանիքների և առաջին խմբի հաշմանդամների բնակարանային ապահովման խնդիրներ ունեցող ընտանիքների ցուցակները և կազմակերպել ենք դրանց գործընթացը:

- Կազմակերպել և ապահովել ենք «Անմահության մարտիկները» հուշակոթող գրքի շնորհանդես-համերգին զոհված զինծառայողների ընտանիքներից 2 անձի մասնակցությունը:

9. Մշտական աշխատանքներ է տարվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների պաշտոնատար անձանց շրջանում, որպեսզի ժամանակին և սահմանված ձևով վարեն զինապարտների գրանցամատյանները, զինվորական հաշվառման ենթակա անձանց ցուցակները ներկայացնեն նրանց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ:

10. 3-րդ բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ, գնդապետ Հ.Պետրոսյանի և Սպիտակի զինկոմիսարիատի աշխատակիցների հետ համատեղ հանդիպումներ ենք ունեցել մարզի Սպիտակի տարածաշրջանի համայնքներում, քարոզչական աշխատանքներ են տարվել պայմանագրային զինվորական ծառայության անցնելու պահեստազորում հաշվառված զինապարտների շրջանակներում, նրանց մանրամասնը բացատրվել է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները, որը կշարունակվի մարզի մյուս տարածաշրջաններում ևս:

ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

Ս.ՂՈՒԲԱԹՅԱՆ